

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Գոհար Սաթունց, Ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն, ք. Վիեննա, 2021 թվականի հունվարի 13-ից 24-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Արժույթի միջազգային հիմնադրամ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Կարճաժամկետ կանխատեսում/nowcasting» խորագրով դասընթացին, որի ընթացքում ներկայացվել է ժամանակակից հեռարձակման նորագույն գործիքներ, որոնք ծանոթացնում են կանխատեսման գործընթացում բարձր հաճախականությամբ տնտեսական ցուցանիշները ներառելու հասկացություններին և մեթոդներին, միաժամանակ ինտեգրելով այս դասընթացը տվյալների հավաքագրման և տարածման տեխնիկական աջակցության մեջ: Հատկանշական է, որ դասընթացը հնարավորություն է ընձեռում իրականացնել վիճակագրական ընթացակարգեր EViews ծրագրային փաթեթով՝ ներառյալ ժամանակային շարքերի կոնսոլիդացիան ինտերպոլացիայի տեխնիկա, սեզոնային ճշգրտումը, ինչպես նաև կառուցել և գնահատել «Nowcasting» մոդելները՝ օգտագործելով մի շարք մոտեցումներ ինչպիսիք են՝ Bridge MIDAS և U-MIDAS գնահատականները:

Ներկայացված դասախոսություններն ուղեկցվել են գործնական սեմինարներով քննարկված գործիքակազմի գործնական կիրառմամբ:

Ընդհանուր առմամբ, դասընթացը համապարփակ կերպով ամփոփել է կարճաժամկետ կանխատեսման հիմնական մոտեցումները, գործիքակազմը, ինչպես նաև վերջիններիս իրականացման տեխնիկան ու ընթացակարգը՝ հնարավորություն տալու գնահատել կարճաժամկետ կանխատեսման ճշգրտությունը՝ օգտագործելու կանխատեսման մի քանի ցուցանիշներ:

5. Քննարկված թեմաները՝

1. Կարճաժամկետ կանխատեսման ներածություն
2. Էկոնոմետրիկ և վիճակագրական մի շարք ընթացակարգերի իրականացում EViews ծրագրային փաթեթի միջոցով,
3. Կարճաժամկետ կանխատեսման համար անհրաժեշտ վիճակագրական պրոցեդուրաների իրականացում: Ժամանակային շարքերի վերլուծություն,
4. ARIMA մոդելներ, առաջատար ցուցանիշներ (leading indicators),
5. Բարձր հաճախականությամբ զուգանիշներ, ոչ ավանդական տվյալներ,

6. Կարճաժամկետ կանխատեսման ստանդարտ մեթոդներ (Bridge, MIDAS, U-MIDAS).
7. Գործոնային մոդելներ (Factor models) և դրանց գնահատումը,
8. Dynamic factor models, state space representation, Կալման ֆիլտր,
9. Վեկտոր ավտոռեգրեսիվ մոդելներ (VAR, MF VAR),
10. Մեքենայական ուսուցումը կարճաժամկետ կանխատեսման մեջ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացով նախատեսված դասախոսություններն ուղեկցվել են գործնական սեմինարներով՝ մշակված գործիքակազմով ներկայացված տեսական գիտելիքները գործնականում կիրառելու նպատակով: Յուրաքանչյուր գործնական աշխատանք ամփոփվում էր ստացված արդյունքների քննարկմամբ: Մասնավորապես, որպես դասընթացի ամփոփում, ներկայացվել է Սերբիայի Հանրապետության ՀՆԱ-ի 4-րդ եռամսյակի համար կանխատեսված ցուցանիշը՝ ունենալով տարբեր հաճախականությամբ տվյալներ, ինչպես նաև կիրառելով դասախոսությունների ընթացքում ներկայացված մոդելներն ու վերջիններիս իրականացման տեխնիկան:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:



30 հունվար, 2025թ